

sof հաւասաց խօսից եպիսկոպոսին իբրեւ անշարիտ խօսից, գրեաց թռչոյք արձակելուս եւ օրհնութեան եպիսկոպոսին, այլ եւ զիւր օրհնութեան Եղովայ ֆաղափին եւ առաջեաց առ Նիկիոյն, որ ի Բուրսայ եր եւ Նիկիոյն առեալ ըզթռչոյսն զայնոսիկ դարձաւ եւ զնացեալ եհաս յԵղով, եւ Եղովացիք իբրեւ տեսին զթռչոյսն Գրիգոր վարդապետին, ուրախացան եւ միաբանեցան ընդ եպիսկոպոսին:

Իսկ Գրիգոր վարդապետն ի ձեռն ճանապարհորդաց եւ յարանց զիտոյց հաւաստեաւ ի վերայ եհաս թե, Նիկիոյ եպիսկոպոսն յորժամ եկեալ է ի Բուրսայ, ոչ հիշանդացեալ է եւ ոչ սկարացեալ, այլ խորհրդակցութեամբ Արիստակես վարդապետին զկայ առեալ կացեալ է ի Բուրսայ, եւ հնարիւք եւ պատրոշակսն բանիւք արձակելուս թռչոյք առեալ է եւ զնացեալ ի տեղի իւր: Եւ ի վերայ այս խաբեութեան՝ զոր աւարեալ է եպիսկոպոսն ընդ վարդապետին, կարի վշտացեալ է վարդապետն, եւ զանկեայն խաբեութիւն գործոց նորս գրով ծանուցեալ է Եղովացոց, այլ եւ գրեալ է թե զայն առաջին նշովսն եւ բանադրանքն սակաւին կայ ի վերայ այդ եպիսկոպոսիդ, վասն որոյ եւ Եղովացիք յեսս կացին յեպիսկոպոսին, եւ ոչ ընդունիին զնա, եւ անկաւ հակառակութիւն ի սեռ եպիսկոպոսին եւ ժողովրդոցն յոյժ սասիկ» (Առաւել Դատարանի, էջ 370-371):